Դիտողություններ

Հայաստանի ապագայի վերաբերյալ ՀԱՀ-ում անցկացվելիք խորհրդաժողովի կազմակերպման վերաբերյալ

Խորհրդաժողովը կարող է կազմակերպվել, ինչպես դա առաջարկել է պրն Թեմբեքճյանը, մասնագիտացված սեմինարների շարքի ձևով, որն անշուշտ նկատի է ունենալու ՀԱՀ-ի հինգ բաժինների ուղղությունները: Սակայն, ըստ մեզ, նպատակահարմար չէ սեմինարների նյութը միանշանակորեն կապել այդ բաժիններում ուսուցանվող առարկաների հետ: Մոտեցումը պետք է ավելի ճկուն լինի և նախատեսվող սեմինարների շարքը քննարկումների արդյունքում պետք է հանգի մի ամբողջության, որում կրացահայտվեն հանրապետության զարգացման ներքին միտումները և հնարավորությունները:

Որպես քննարկման նյութ առաջարկում ենք 8 սեմինարից բաղկացած խորհրդաժողովի նախնական պլան: ՀԱՀ շրջանակներում տեղի ունեցած նախնական քննարկումներից ելնելով, ենթադրում ենք, որ ծրագիրը պետք է իրականացվի 1994-ի աշնանը 10 շաբաթվա ընթացքում: Յուրաքանչյուր սեմինարի հատկացվում է մեկ շաբաթ /երկուական քննարկումով/: Թեմաներից երկուսը, որ ամենածավալունն են, նախատեսվում է անցկացնել 2 շաբաթվա ընթացքում: Ստորև ներկայացվող համարակալումը նկատի ունի բաշխումը ըստ շաբաթների:

Խորհրդաժողովի ընդհանուր վերնագիրը.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԴԻԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԻ ԱՌՋԵ

Սեմինարներ.

1. Արտաքին քաղաքականություն
   - Երկարատև խաղաղության հեռանկարը:
   - Հայաստանի տեղը կոլեկտիվ անվտանգության համակարգում:
2. Ներքաղաքական զարգացում
   - Հասարակության ստրուկտուրավորման և շերտավորման միտումները:
   - Ազդեցության խմբերի և ընտրախավերի ձևավորումը:
   - Միգրացիոն պրոցեսներ:

3. Սոցիալական նորացում՝ նպատակներ և ավանդույթներ:

- Ավանդույթների ընդհանուր դասակարգում.

  ա. ավանդական ապրելակերպ

  բ. ազգային մտածելակերպ

  գ. սոցիալիստական ապրելակերպ և մտածելակերպ:

- Ավանդական մտածելակերպի տրանսֆորմացիայի հնարավորությունները և ուղղությունները:

4.5. Հաղորդակցական համակարգեր՝ համակարգիչներ, ինֆորմացիա, կապի միջոցներ /2 շաբաթ/

- Համակարգիչները զանգվածային կրթության համակարգում:
- Հայաստանի մուտքը համաշխարհային ինֆորմացիոն ցանց:
- Հայրենիք - Սփյուռք հաղորդակցական համակարգի ստեղծում:
- Կազմակերպական խնդիրներ՝ առաջարկված նախագծերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթհայթում և լեզվական արգելքների հաղթահարում:

6. Կրթություն և գիտություն

- Կրթական և գիտական համակարգերի փոխհամաղրված զարգացման հնարավորությունները: Ֆինանսավորման աղբյուրներ, գիտական և կրթական կապեր:
- Ճարտարագիտություն:
- Հասարակական առողջություն:

7. Կառավարման գործընթացներ

- Պետական ծառայության համակարգը:
- Գործարար կառավարում:

8.9. Տնտեսություն՝ հրատապ խնդիրներ և հեռանկարներ /2 շաբաթ/

- Պետական կարգավորման ոլորտ:
- Մասնավորատրում:
- Ֆինանսական քաղաքականություն:
- Գործարար զարգացում:

10. Իրավունք, իրավագիտություն, իրավական պետություն

Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոնը /ՀՀՀԿ/ կարող է իր նպաստը բերել խորհրդաժողովի կազմակերպմանը:

Ա.Ոսկանյան
ՀՀՀԿ գործադիր տնօրեն,
ՀՀ Գխ նախագահության
անդամ